ՀԱՐՑ 4. «Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում

Առաջարկություն Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ

Համաձայն «Յունիբանկ» ԲԲԸ 03.05.2023թ. Խորհրդի որոշման, Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվում են Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի,
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին, Խորհրդի կազմում ընդգրկել Ռուբեն Ինջիկյանին:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետեր «Uniholding GG Limited» ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական բաժնետոմսերի քանակը՝ 155.572.240 հատ, արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ 32.010.000 հատ)
Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Հրահատ Արզումանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Վարդան Աթայան՝ Բանկի բաժնետեր (սովորական բաժնետոմսերի քանակը՝ 5.483 հատ)
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Ռուբեն Ինջիկյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

ՀԱՐՑ 5. «Յունիբանկ» ԲԲԸ 2022թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում

Առաջարկություն շահույթի բաշխման վերաբերյալ

Հաշվի առնելով «Յունիբանկ» ԲԲԸ 2022թ. ֆինանսական գործունեության արդյունքները՝ Բանկի 03.05.2023թ. Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է.

- սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 4,397,025 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

ՀԱՐՑ 6. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերի գնահատում

Վերը նշված ներքին իրավական ակտերն անփոփոխ թողնելու վերաբերյալ առաջարկություն

<<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը վերահաստատվել են 24.06.2022թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Հաշվի առնելով, որ <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքում, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերում չեն կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեին նշված իրավական ակտերը խմբագրելու անհրաժեշտության, ի հայտ չեն եկել էական անհամապատասխանություններ, 03.05.2023թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է նշված ներքին իրավական ակտերը թողնել անփոփոխ:

ՀԱՐՑ 7. <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունների հաստատում:

ՀՀ ԿԲ <Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները> Կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունների հետ կապված, որոնք մասնավորապես սահմանում են, որ բանկի էմիսիոն եկամուտը ներառվում է առաջին մակարդակի կապիտալի կազմում այն դեպքում, եթե բանկի կանոնադրությամբ նախատեսված է, որ բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն <Բանկերի և բանկային գործունեության մասին> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալի նվազեցման կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը, առաջարկվում է Բանկի Կանոնադրության <Բանկի կանոնադրական հիմնադրամը, այլ հիմնադրամներ> 4-րդ հոդվածում ավելացնել 4.15-րդ կետը՝ հետևյալ խմբագրությամբ.

<Բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն <Բանկերի և բանկային գործունեության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալի նվազեցման կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը:>